



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/221/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

24 հոկտեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հոկտեմբերի 24-ին քննելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Հասմիկ Յուրիկի Ավագյանի կողմից ներկայացված՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2025 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/221/2025 վարչական գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերով՝ իրականացրել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Հասմիկ Յուրիկի Ավագյանի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանման մշտադիտարկում, որի ընթացքում, ի թիվս այլնի, ուսումնասիրվել է հայտարարագրման էլեկտրոնային համակարգում առկա Հասմիկ Ավագյանի՝ 2025 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագիրը (այսուհետ՝ Հայտարարագիր), որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1) Հասմիկ Ավագյանի Հայտարարագրի՝ «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտրանիքի անդամների մասին տվյալները» և «Ա.3. Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժիններում նրա ընտանիքի անդամների և մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց վերաբերյալ հայտարարագրված տվյալներ առկա չեն, մինչդեռ, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տվյալների շտեմարանի համաձայն՝ 2014 թվականի նոյեմբերի 4-ին կատարվել է Հասմիկ Ավագյանի և Սուրիկ Սլավիկի Մանուկյանի ամուսնության պետական գրանցումը, 2015 թվականի օգոստոսի 21-ին կատարվել է երեխաների՝ Նարե Սուրիկի Մանուկյանի ծննդյան պետական գրանցումը, իսկ 2019 թվականի հունվարի 10-ին՝ Սոսե Սուրիկի Մանուկյանի ծննդյան պետական գրանցումը, սակայն վերոնշյալ անձանց տվյալները հայտարարագրված չեն Հասմիկ Ավագյանի Հայտարարագրում:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի հոկտեմբերի 2-ին Հասմիկ Ավագյանին հասցեագրել է թիվ 01/3755-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 11:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելուն, որի վերաբերյալ Հասմիկ Ավագյանը պատշաճ ծանուցվել է:

1.3 2025 թվականի հոկտեմբերի 6-ին պատշաճ ծանուցված Հասմիկ Ավագյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 443/25

արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 2025 թվականի հոկտեմբերի 13-ին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Հասմիկ Ավագյանի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել միջնորդություն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը 2025 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը 16:00-ին, տեղափոխելու վերաբերյալ:

1.5 Հասմիկ Ավագյանի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարվել է և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը տեղափոխվել է 2025 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը 16:00-ին, որի մասին Հասմիկ Ավագյանը պատշաճ ծանուցվել է:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Հասմիկ Ավագյանի բացակայությամբ 2025 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը՝ 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Հասմիկ Ավագյանը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ընթացքում, ինչպես նաև 2025 թվականի հոկտեմբերի 13-ին նշանակված գործի քննության ժամանակ, Հանձնաժողովին ներկայացրել է պարզաբանում, համաձայն որի՝ պաշտոնի նշանակվելուց հետո առաջին անգամ է ներկայացնում հայտարարագիրը և տեղեկացված չի եղել օրենսդրական կարգավարումների մասին, ավելին, գործընկերներին խնդրել է, որ իրեն հայտարարագիրը լրացնելիս օգնեն, սակայն իրեն չեն տեղեկացրել, որ անհրաժեշտ է լրացնել նաև ընտանիքի անդամների, ինչպես նաև մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց տվյալները: Որևէ միտում կամ դիտավորություն չի ունեցել ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու, հատկապես այն դեպքում, որ իր երեխաների և ամուսնու վերաբերյալ առկա չեն հայտարարագրման ենթակա տվյալներ, այսինքն ըստ էության, ամուսինը պետք է ներկայացներ զրոյական հայտարարագիր (բացառությամբ ամսական 36.000 ՀՀ դրամ աշխատավարձը), որով որևէ կերպ չի խաթարվել պաշտոնատար անձի հաշվետվողականության և թափանցիկության

սկզբունքը: Ինչ վերաբերում է մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց, ապա ինքն ունի քույր, ծնողներ, ամուսինը՝ եղբայր և ծնող՝ մայր (հայրը մահացել է), որոնց վերաբերյալ տվյալները նույն պատճառաբանությամբ չի հայտարարագրել: Միաժամանակ նշեց, որ իր ընտանիքի անդամների շահերի վերաբերյալ ևս առկա չեն տվյալներ, որոնք պետք է արտացոլվեին հայտարարագրում:

Գործի քննության ընթացքում վարույթի մասնակիցը նաև նշել է, որ ընտանիքի անդամների, ինչպես նաև մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց վերաբերյալ տվյալները իր կողմից ներկայացվել են Հայտարարագրի «Ընտանիքի կազմը» և «Մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք» բաժնում:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/221/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի մարտի 24-ի թիվ 235-Ա որոշման համաձայն՝ Հասմիկ Ավագյանը նշանակվել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ:

3.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Հասմիկ Ավագյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տվյալների շտեմարանի համաձայն՝ 2014 թվականի նոյեմբերի 4-ին կատարվել է Հասմիկ Ավագյանի և Սուրիկ Սլավիկի Մանուկյանի ամուսնության պետական գրանցումը, 2015 թվականի օգոստոսի 21-ին կատարվել է երեխաների՝ Նարե Սուրիկի Մանուկյանի ծննդյան պետական գրանցումը, իսկ 2019 թվականի հունվարի 10-ին՝ Սոսե Սուրիկի Մանուկյանի ծննդյան պետական գրանցումը:

3.4 Հասմիկ Ավագյանը Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չի հայտարարագրել ամուսնու՝ Սուրիկ

Սլավիկի Մանուկյանի, անչափահաս զավակների՝ Նարե Սուրիկի Մանուկյանի և Սոսե Սուրիկի Մանուկյանի վերաբերյալ տվյալները:

3.5 Հասմիկ Ավագյանի ամուսնու՝ Սուրիկ Մանուկյանի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 16-ին պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական պաշտոն զբաղեցնող անձին:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև իր ընտանիքի անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:

4.3 Նույն հոդվածի 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերի համաձայն հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

Սույն օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը:

4.4 Օրենքի 39-րդ հոդվածի (Հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալները) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը)։

4.5 Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ։

Սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը։

4.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով։

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները։

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական

հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Հասմիկ Յուրիկի Ավագյանը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է՝ Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չի հայտարարագրել ամուսնու՝ Սուրիկ Սլավիկի Մանուկյանի, անչափահաս զավակների՝ Նարե Սուրիկի Մանուկյանի և Սոսե Սուրիկի Մանուկյանի վերաբերյալ տվյալները, իսկ «Ա.3. Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժնում տվյալներ չի հայտարարագրել, որոնք պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը

դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հայտարարագիր ներկայացնելու պարտականության նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամների գույքային դրության թափանցիկությունը, կանխել շահերի բախման, կոռուպցիոն դրսևորումների և ապօրինի հարստացման ռիսկերը՝ հնարավորություն տալով իրականացնել հանրային վերահսկողություն: Այս համատեքստում օրենքով սահմանված է, որ պաշտոնատար անձը պարտավոր է հայտարարագրել իր ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալները, քանի որ դրանք կարող են նշանակություն ունենալ պաշտոնատար անձի գույքային դրության ամբողջական գնահատման համար:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը գնահատում է ոչ միայն խախտման առկայությունը, այլև դրա հասարակական վտանգավորության աստիճանը և իրավական հետևանքների ծավալը: Այս առումով էական է դիտում հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը՝

1. Հասմիկ Ավագյանը, մինչ սույն գործի քննության ավարտը, հայտարարագրման էլեկտրոնային համակարգում լրացրել է այն ամբողջական տվյալները, որոնց առնչությամբ Հանձնաժողովը նախաձեռնել էր վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը, այդ թվում՝ ամուսնու և երեխաների վերաբերյալ պահանջվող տվյալները:
2. Հասմիկ Ավագյանի ամուսինը, մինչ սույն գործի քննության ավարտը՝ 2025 թվականի հոկտեմբերի 16-ին, ներկայացրել է օրենքով պահանջվող հայտարարագիրը:
3. Հասմիկ Ավագյանի ամուսնու գույքային դրությանն առնչվող տվյալները չունեն էական ազդեցություն պաշտոնատար անձի և նրա ընտանիքի ամբողջական կազմի գույքային դրության համատեքստում, ավելին՝ ամուսնուն պատկանող տրանսպորտի միջոցի վերաբերյալ տվյալները հայտարարագրված են եղել Հասմիկ Ավագյանի հայտարարագրում, իսկ անշարժ գույքերից մեկի (հասցե՝ Արտաշատ, Ծ.Իսակովի փող. 109/1) բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը դեռևս 2023 թվականին նվիրատվության պայմանագրի հիման վրա հանձնվել է Սուրիկ

Մանուկյանի մորը՝ Լալա Խաչատրյանին, իսկ մյուսի (հասցե՝ Արարատի մարզ, գյուղ Այգեպատ, Անկախության 28) վերաբերյալ առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որը կայացվել է 02.08.2024թ. և որով վճռվել է նշված անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառել, իսկ ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության համասեփականատերերի, այդ թվում՝ Սուրիկ Մանուկյանի միջև, որի մասին տվյալը Սուրիկ Մանուկյանը ներառել է պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրում:

4. Անչափահաս զավակների գույքային դրությանն առնչվող՝ հայտարարագրման ենթակա տվյալները բացակայել են:
5. Հասմիկ Ավագյանը հայտարարատու պաշտոն զբաղեցրել է առաջին անգամ և քննարկվող խախտումը կատարվել է առաջին անգամ ներկայացված հայտարարագրում:

Նշված բոլոր հանգամանքների միաժամանակյա առկայության պայմաններում Հասմիկ Ավագյանի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացումը **չի հանգեցրել օրենքով հետապնդվող նպատակի բռն էության խախտման, չի խաթարել հայտարարագրման գործընթացի թափանցիկությունը, և չի պատճառել հանրային շահի էական վնաս:**

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ բացթողումը չի խաթարել հայտարարագրային գործընթացի նպատակները, քանի որ ամուսնու կողմից ներկայացված ընտանիքի անդամի հայտարարագրի միջոցով ապահովվել է այն հիմնական իրավական արդյունքը, որի համար նախատեսված է հայտարարագրումը՝ պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների գույքային դրության ամբողջական բացահայտումը:

Այսպիսով, թեև ձևական առումով առկա է հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը, այնուամենայնիվ՝ բացթողումը չի հանգեցրել հանրային շահի էական վնասման կամ թափանցիկության սկզբունքի խախտման:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Հասմիկ Յուրիկի Ավագյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հասմիկ Յուրիկի Ավագյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հասմիկ Յուրիկի Ավագյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հասմիկ Յուրիկի Ավագյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ